Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կողմից 2024 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Քաղաքաշինություն

Ներդրումային ծրագրեր՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվիրատվությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ԾԻԳ-ի կողմից մարզում կառուցվել է՝ «Եղեգիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցում (հզորությունը 100 տեղ): Նախահաշվային արժեքը կազմում է՝ 737.300.00 ՀՀ դրամ: Աշխատանքներն ավարտված են:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվիրատվությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ԾԻԳ-ի կողմից մարզում կառուցվել է՝ «Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցում (հզորությունը 144 տեղ): Նախահաշվային արժեքը կազմում է 725.300.000 ՀՀ դրամ: Աշխատանքներն ավարտված են:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվիրատվությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ԾԻԳ-ի կողմից կառուցվում է՝ «Չիվայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (հզորությունը 144 տեղ): Նախահաշվային արժեքը կազմում է 694,679.21 ՀՀ դրամ: Կատարված են շինարարական աշխատանքների 67% -ը՝ ընդամենը 465 435 070 ՀՀ դրամ: Ծրագրի սկիզբ՝ 21.04.2022թ., ավարտ՝ 21.04.2024թ. Շինարարության թույլտվությունը չի երկարացվել: 2024 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի համաձայն «Կանժիլստրոյ» ՍՊ ընկերության՝ /կապալառու կազմակերպություն/ քաղաքաշինության բնագավառում տրամադրված շինարարության իրականացման լիցենզիայի գործողությունը կասեցվել է:

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվիրատվությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ԾԻԳ-ի կողմից վերակառուցվել է Շատինի միջնակարգ դպրոցի մարզադահլիճը և հանդիսությունների սրահը: Նախահաշվային արժեքը կազմում է 209.980.000 ՀՀ դրամ: Աշխատանքներն ավարտված են:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվել է Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցից դեպի ըմպելասրահ տանող ճեմուղու վերանորոգում, բարեկարգում, տաղավարների և տեղեկատվական կենտրոնի կառուցում Նախահաշվային արժեքը կազմում է 4.614.000 ՀՀ դրամ,
Աշխատանքներն ավարտված են:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվել է Եղեգնաձոր համայնքի Նոր Ավան թաղամասի կոյուղու ցանցի և բիոմաքրման կայանի կառուցում:
Նախահաշվային արժեքը կազմում է 98,293,222 ՀՀ դրամ,
Կապալառու կազմակերպություն ՝ «Արտեզիա» ՍՊԸ,
Որակի տեխնիկական հսկողություն ռպություն՝ «Իրտիգ», ՍՊԸ և «Ալտերնատիվ» ՍՊԸ
Հեղինակային հսկողություն՝ «Սարգիս Մարիաննա» ՍՊԸ:
Ծրագրի սկիզբ՝ 2023թ., ավարտ՝ 2024թ.: Աշխատանքներն ավարտված են:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվել է Ջերմուկ քաղաքի Շահումյանի, Վ. Վարդանյանի, Մյասնիկյանի, Մելիք Ադամյանի և Չարենցի փողոցների վերականգնում, բարեկարգում:
Նախահաշվային արժեքը կազմում է 704.476.583 ՀՀ դրամ,
Կապալառու կազմակերպություն ՝ «Վայքի» ՃՇՇ,
Որակի տեխնիկական հսկողություն ռպություն՝ «Հալդի քոնսալթ»,
Հեղինակային հսկողություն՝ «Հալդի քոնսալթ» ՍՊԸ:
Ծրագրի սկիզբ՝ 2021թ., ավարտ՝ 2024թ.: Աշխատանքներն ավարտված են:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվում է Ջերմուկ քաղաքի Եղնիկի արձան մոտեցնող ճանապարհի և դիտահրապարակի կառուցում և Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում
Նախահաշվային արժեքը կազմում է 349.844.160 ՀՀ դրամ
Կապալառու կազմակերպություն ՝ «Արհովշին» ՍՊԸ,
Որակի տեխնիկական հսկողություն ՝ «Հալդի քոնսալթ» ՍՊԸ,
Հեղինակային հսկողություն՝ «Հալդի քոնսալթ» ՍՊԸ:
Ծրագրի սկիզբ՝ 10.02.2023թ., ավարտ՝ 10.02.2025թ: Աշխատանքներն ավարտված են:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն կողմից իրականացվում է Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի Սբ Աստվածածին եկեղեցու որմնանկարների ամրակայում և վերականգնում:
Նախահաշվային արժեքը կազմում է 25,697.69 ՀՀ դրամ
Կապալառու կազմակերպություն՝ «Ռեստարտ 1» ՍՊԸ
Որակի տեխնիկական հսկողություն՝ «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ
Հեղինակային հսկողություն՝ «ՃՇՀԱՀ» հիմնադրամ
Ծրագրի սկիզբ՝ 27.07.2024թ., ավարտ՝ 30.12.2024թ.:
Աշխատանքներն ավարտված են:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից իրականացվել է Մ-10՝ Սևան – Մարտունի – Գետափ կմ 117+042 հատվածում գտնվող կամրջի հիմնանորոգում
Նախահաշվային արժեքը կազմում է 94.202.400 ՀՀ դրամ /Եղեգիս համայնք/:

Աշխատանքներն ավարտված են:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն կողմից իրականացվում է Ջերմուկ համայնքի Գնդևազ բնակավայրի Սբ Աստվածածին եկեղեցու

ամրակայում, նորոգում, վերականգնում
Նախահաշվային արժեքը կազմում է 189,378.34 ՀՀ դրամ
Կապալառու կազմակերպություն՝ «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ
Որակի տեխնիկական հսկողություն՝ «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ
Հեղինակային հսկողություն՝ «ԴԱՆՄԵՐԻ» ՍՊԸ
Կատարված են շինարարական աշխատանքների 40%-ը, ընդամենը 75 751 336 ՀՀ դրամ:
Ծրագրի սկիզբ՝18.07 2024թ., ավարտ՝30.12. 2024թ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվում է Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի բարեկարգում
Նախահաշվային արժեքը կազմում է 732.437.561 ՀՀ դրամ
Կապալառու կազմակերպություն ՝ «Արհովշին» ՍՊԸ,
Որակի տեխնիկական հսկողություն ՝ «Հալդի քոնսալթ» ՍՊԸ,
Հեղինակային հսկողություն՝ «Հալդի քոնսալթ» ՍՊԸ:
Կատարված են շինարարական աշխատանքների 92%-ը, ընդամենը 673 842 556 ՀՀ դրամ:
Ծրագրի սկիզբ՝ 18.08.2021թ., ավարտ՝ 20.07.2024թ: Շինարարության թույլտվությունը երկարացվել է մինչև 25.05.2026թ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվում է Ջերմուկ քաղաքի Ջրվեժին մոտեցման ճանապարհի և ճեմուղիների վերականգնում, կամրջակի, ավտոկայանատեղիի և մայթերի կառուցում
Նախահաշվային արժեքը կազմում է 467.211.206 ՀՀ դրամ
Կապալառու կազմակերպություն ՝ «ԲԵՍԹ ՌՈՈՒԴ» ՍՊԸ,
Որակի տեխնիկական հսկողություն ՝ «Հալդի քոնսալթ» ՍՊԸ,
Հեղինակային հսկողություն՝ «Հալդի քոնսալթ» ՍՊԸ:
Կատարված է շինարարական աշխատանքների 10%-ը20, ընդամենը 46 721 120 ՀՀ դրամ:
Ծրագրի սկիզբ՝ 30.10.2023թ., ավարտ՝ 30.10.2025թ:
Բարեգործական ծրագիր՝

<<ՋիէյՋէմ-ԱՐՄԵՆԻԱ>> զարգացման հիմնադրամի կողմից իրականացվել են Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրում մանկապարտեզի կառուցման աշխատանքները: Նախահաշվային արժեքը կազմում է 1.364.949.388 ՀՀ դրամ,
Աշխատանքներն ավարտված են:

Ընդամենը մարզում ՝ 5 576 407 525 ՀՀ դրամ:

Մասնավոր ներդրումներ՝

Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրում «Թավիթիան Վինյարդ» ՍՊԸ-ի կողմից կառուցվում է հյուրանոցային համալիր:

Նախահաշվային արժեքը կազմում է 2.3 մլն դրամ:
Կապալառու կազմակերպություն ՝ «Կվադրա Կապիտալ» ՍՊԸ
Որակի տեխնիկական հսկողություն ՝ «Մոդուլ» ՍՊԸ,

Աշխատանքների ավարտ՝ 2026թ.:

2. Ջրամատակարարման, ջրահեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է թվով 7 ջրամատակարարման համակարգեր: Ընկերության բաժանորդների թիվը 9689 է, որից 796-ը իրավաբանական կազմակերպություններ: 2023 թվականի համեմատ բաժանորդների թիվը 2024 թվականին ավելացել է 105 բաժանորդով, որից 23-ը իրավաբանական կազմակերպություններ:
Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից:

3.Գազիֆիկացում

Վայոց ձորի մարզի 5 համայնքների 44 բնակավայրերից գազիֆիկացված է 17 բնակավայր: Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազիֆիկացված բնակավայրերի գազիֆիկացումը: Միաժամանակ աշխատանքներ են տարվում ազգաբնակչության հետ այլընտրանքային էներգետիկ համակարգերից օգտվելու համար: Մարզում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի բաժանորդների թիվը 9371 է, որից 4450-ը բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, 4601 անհատական տներ և 320 իրավաբանական կազմակերպություններ: Տեղադրվել են 134 անվտանգության ազդանշանային սարքեր: Հաշվետու տարում բնական գազի շահագործման ընթացքում արտակարգ դեպքեր չեն արձանագրվել:

4. Ճարտարապետություն

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում վարչության կողմից ուսումնասիրվել և լիազոր մարմին է ուղարկվել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտիներում նախագծման թույլտվություն պահանջող, համայնքի ղեկավարների կողմից ներկայացված քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթներ: Ուսումնասիրման փուլում կասեցվել և լրամշակման է ուղղարկվել թերի փաթեթներ:
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ համատեղ ուսունմասիրվել է Վայք համայնքի կողմից ներկայացված 12 հարկանի բազմաբնակարան շենքերի կառուցման քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթը՝ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում փոփոխություն կատարելու վերաբերյալ և տրվել դրական լուծում:

ՀՀ ՏԿԵՆ տեղեկատվություն ներկայացնելու համար պարբերաբար կատարվում է ուսումնասիրություն ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների վրա, հատկապես խոշոր քաղաքների կենտրոնական հատվածներում

գույքագրված կիսակառույց, անավարտ շինարարական օբյեկտներում: Աշխատանքները ընթացքի մեջ են:

Կատարվել է բնակավայրերում հողի նպատակային նշանակության փոփոխության աշխատանքներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություններ:

Վարչությունը հաշվետու ժամանակահատվածում համայնքներից ստացել է հողամասի գործառնական նշանակության փոփոխության առաջարկներ, որոնք ուսումնասիրվել, քննարկվել և տրվել է դրական եզրակացություն:

Մ-2 միջպետական մայրուղուն հարակից տարածքներում ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառված ինքնակամ կառույցների օրինականացման համար համայնքներից ստացված քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթները ուսունմասիրվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտե է ներկայացվել համաձայնության :

ՀՀ ՏԿԵՆ հանձնարարականի համաձայն աշխատանքներ է տարվում համայնքների հետ համայնքային գույքի գրանցման բնագավառում: Աշխատանքները ընթացքի մեջ են:

Քննարկվել և տրվել է կարծիք ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացրած օրենքների և որոշման նախագծերի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում վարչությունը ստացել է համայնքներից 448 շինթույլտվություններ, որոնք հաշվառել և ներկայացվել է հաշվետվություն ՀՀ ՏԿՆ՝ ամսեկան կտրվածքով:

5. Ճանապարհաշինություն

Այցելություն ենք իրականացրել մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների վրա կատարված պահպանության աշխատանքները ստուգելու նպատակով:

Քննարկվել և ներկայացվել է ՀՀ ՏԿԵՆ համապատասխան ստորաբաժանման հետ ՀՀ Վայոց ձորի մարզի հիմնանորոգման ենթակա ավտոճանապարհների 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտը:

2024 հաշվետու ծամանակահատվածում ավարտվել է <<Ջերմուկ համայնքից դեպի Կարմրաշեն <<Ալպյան>> մարգագետիներ տանող գրունտային ճանապարհի կառուցման>> նախագիծը և <<ՀՀ Վայոց ձորի մարզի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության սխեմաների/ կահավորանք, ճանապարհային նշաներ, նշագծում և այլն/տեղադրման աշխատանքներ>> նախագիծը: Մասնակի իրականացվում է S-9-14 Վայք-Ազատեկ-Փոռ, S-9-27 /Հ-79/-Հորս և S-9-6 /Հ-79/-Սալլի մարզային ավտոմոբիլային ճանապարհների գծանշման և նշանների

տեղադրման աշխատանքները: Աշխատանքները կավարտվեն մինչև 20.12.2024 թվականը:

Քննարկվել և տրվել է կարծիք ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված օրենքների և որոշման նախագծերի վերաբերյալ:

Պարբերաբար կատարել ենք շրջայցեր մարզի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհները սպասարկող կազմակերպությունների կողմից կատարվող ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանության աշխատանքներին հետևելու համար և հսկողություն ենք իրականացրել մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների աշխատանքների կատարման ընթացքին:

Վայոց ձորի մարզի տեղական (մարզային) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային սպասարկման համար 2024 թվականին տրամադրվել է 198 586 400 ՀՀ դրամ: Աշխատանքները իրականացվում է <<Եղեգնաձորի ՃՇՇ>> ՍՊԸ և <<Վայքի ՃՇՇ>> ՓԲԸ կազմակերպությունների միջոցով:

6.Հողաշինություն

Հողաշինության բաժնի կողմից 2024 թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 231013.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 189518.0 հա, այդ թվում վարելահող՝ 15835.4 հա, բազմամյա տնկարքներ՝ 2409.8 հա (պտուղ-1208,9հա, խաղող-1200.9հա), խոտհարքներ՝ 5042.6 հա, արոտ՝ 921909 հա, այլ հողատեսքեր՝ 74040.3հա: Մարզում ոռոգվող հողերը ընդամենը կազմում են 7227.1հա կամ 3,81%

Հաշվետու ժամանակաշրջանում համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշման կարգի համաձայն կատարել ենք բարձրարժեքից – ցածրարժեք հողատեսքերի փոփոխություններ՝ Արենի համայնքից քաղաքացիների սեփականություն հանդիսացող 1,26հա վարելահողեր և 3,55հա պտղատու այգիները փոխադրվել է խոտհարքների և վարելահողերի, իսկ Եղեգնաձոր համայնքում 0,23հա վարելահողը փոխադրվել է խոտհարքի և 0,2 հա պտղատու այգին փոխադրվել է վարելահողի: Նշված փոփոխությունները կարծածվեն մարզի 2025 թվականի ամփոփ հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակվում է:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ենք ներկայացրել, համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում,

հողերի նպատակային նշանակության փոփոխության 58 առաջարկություններ, որից 29-ին հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն, որն էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքներ, իսկ 29-ը ընթացքի մեջ են:

Համաձայն ՀՀ կառավարության 29. 12. 2011թվականի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ենք ներկայացվել Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1,0հա և 1,61014հա, Գետափ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 2,7հա և Վայք համայնքի Հերհեր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 56,18հա արոտների գործառնական նշանակության փոփոխությունները՝ վարելահողերի և խոտհարքների, որոնք ընթացքի մեջ:

Համաձայն ՀՀ կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ենք ներկայացրել Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի 1,49հա, Վայք համայնքի Զառիթափ բնակավայր 0,44799հա և Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի 3,9հա վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման առաջարկությունները, որոնք ընթացքի մեջ են:

Մարզպետի որոշմամբ իրավական և մասնագիտական ստուգում ենք իրականացրել Ջերմուկ համայնքում, հայտնաբերված թերությունների վերացման համար՝ արոտների օգտագործման տրադրումը կատարել իրավական ակտերի պահանջներին համապատասխան, որի վերաբերյալ հստակ ժամկետ է տրվել:

Ուսումնասիրվել և օրինականություններն են ստուգվել հողային հարաբերությունների բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավարի և ավագանու) կողմից ընդունված որոշումները:

Հետևողականանություն է հանդես բերվել, որպեսզի համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալության տրամադրման աշխատանքներն իրականացվեն ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչություն